

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն շաբաթով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մի խորհուրդ «Արարատեան» ընկերութեանն էր
ն երբեք տեսնուած էր: Նամակ Մոսկովայից:
Ներքին լուրեր: Արտաքին տեսնուած էր:
Թիֆլիս: խառն լուրեր: «Մշակի» հետազոտներ:
— Գայտարարութիւններ: Տեղեկացոյց: — Բանա-
սիրական: Նախակրթանք:

ՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Այս անգիւնով «Արարատեան ընկերութեան» երրորդ տեղեկագիրը, որ ընկաւ այս օրերս մեր ձեռքը, մեծ բաւականութեամբ նկատեցինք նորա նշանակած պարագրաման Հայաստանի նախակրթարանների համար. ազգային պատմութիւնը և աշխարհաբան լեզուն դեռահաս սերունդի գլխաւոր պարագիծն է նոցա մէջ: Մի այդչափ վստահ նորամուծութիւն հայոց աւանդական սխօլաստիկայի մէջ, այնչափ բարեգուշակ երևոյթ է Հայաստանի նոր գործիչների վերաբերմամբ, որ չէ կարելի չը ծափահարել նոցա դէպքերին, ինչպէս մի արդիւնաւատ վերջաւորութեան համետ սկզբին: Տարակոյս չը կայ որ եթէ քննենք թիւրքական հայերին, ինչ-

պէս մի սկսող և փնտռող ազգին, նորա սկզբնական կարիքը և տարրական պահանջը նախ և առաջ մենք կը գտնենք նորա հոգեկան զարգացման և ազգային զգացումների մէջ. նախ և առաջ մենք կասենք որ նորա հոգին և սիրտը կազդուրող գլխաւոր սնունդը պիտի լինի ազգի պատմութիւնը և նախնեաց փառքը: Բայց երակներ և երեւակայութեան զարգացումը և դիւրագրաց դարձնելը դեռ չէ կարելի բաւական համարել նպատակայարմար հայրենասէրներ պատրաստելու համար, այլ հարկաւոր է որ ապագայում այդ եռանդոտ հայերը կարողանան, դէպքը պահանջած ժամանակը լինել և ընդունակ անձնապաշտպաններ, եթէ չասած յարձակվողներ, հարկաւոր է որ նոքա կարողանան ոչ միայն զգալ, այլ ևս գործել գործել բանի որ նոցա վիճակված է ապրել այնպիսի դաշնաբարոյ դրացիների հետ ինչպէս քիւրդերն են և շատ ուրիշ նոցա նմանները...

Բայց ի՞նչպէս կարելի է բանալ և խրախուսել այդ ընդունակութիւնը Հայաստանի մատաղահաս սերունդի մէջ, եթէ նորա մտա-

ւոր և հոգեկան զարգացման հետ միասին չը զարգացնել ևս նորա սրտի արիւթիւնը, մարմնի ճարպիկութիւնը և փոքրիկ ձեռքերի ոյժը: Այս անորոյ մի այդպիսի նպատակին համար համար, անշուշտ պէտք է որ Հայաստանի նախակրթարանները և առհասարակ ամեն տեսակ դպրատները չը բաւականանան միայն դասագրքերով, թղթով և թանաքով, այլ անհրաժեշտ հարկաւոր է որ նոցա սրահներում գտնվեն և մարմնամարզական փոքրագոյն յարմարութիւններ, հեշտ և հասարակ սուղաթախաղութիւններ, փայտի և ճիւղտների վրա երեսայարմար զինավարժութիւններ, պէսպէս ֆիզիկական վարժութիւնների խաղեր և զուարճութիւններ, մինչև անգամ պարբերական հանդէսներ, որոնց մէջ կարելի կը լինի բաժանել այնպիսիներին, որոնք կը յայտնվեն ուժով համարձակութեամբ և աշխուկութեամբ:

Այս տեսակ միջոցներով միայն կարելի կը լինի ջնջել խեղճ հայի մէջ դարերով արմատացած աշխուկութիւնը և զխակոր հեղութիւնը, այսպէս կարելի է միայն փոխել նորա ստրկական թմրու-

թիւնը և ընկճված հոգին, բաշտող բնաւորութիւնը և անբնական արտաքին ծանրաշարժութիւնը:

Եւ եթէ ֆիզիկական վարժանքը և սպարտական դաստիարակութիւնը անհրաժեշտ է համարվում մի հօր ազգի մէջ, ինչպէս պրուսացիք են, միթէ հարկաւոր չէ հայերին, որոնց միակ մեղքը Աստուծու առաջ հէնց նա է եղել, որ նոքա միշտ արհամարհել են ֆիզիկական ոյժը, հեռու կանգնել բռնի գործերից և անպատասխան թողել բարբարոսների արարքը: Միթէ հերիք չէ այսչափ դարեր վեղը ու գլուխը պահել ամեն մի խուժադուժի հաւրուածի տակ, միթէ հերիք չէ ամենաստոր ազգերի մէջ անգամ վախկոտութեան և փոքրոգութեան ծաղրածու դառնալ...

Ահա պատճառ, որով դարձեալ ևս հրաւիրում ենք «Արարատեան ընկերութեան» ուշադրութիւնը նորա զծագրած պրոգրամի վրա, որի մէջ մարմնավարժական դաստիարակութիւնը մի խիստ պատուաւոր տեղ պիտի բռնէ: Մարմնավարժութիւնը նոյնչափ հարկաւոր է Դիարբեքիի և Վանի ընկճված հայի, որչափ և հաւ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱԿԻՐԹԱՆՔ

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԲԱՆ ԼԵՋՈՒՌ

ԵՐԵՎԱՆ

Ի Գարեթէ արքեպիսկոպոսէ Ալվազեան

Մասն Ա. Հինգերորդ տպագրութիւնը—

Ճափագոյն քան գառալինս: Թիֆլիս—1878

Հրատարակութիւն կենտրոնական գրաւթառանցին

Բնագիրների ընտրութիւնը, վերջապէս, շատ անպաշտ է:
Աշխարհաբան թարգմանութիւնը նոյնպէս չէ կարելի յաջողված համարել: Գայտնի է, որ գրաբան լեզուն շատ անգամ մի իմաստ բացատրում է աշխարհաբանի բոլորովին տարբեր ոճով: Առնենք օրինակ դա՛հ չար կանաչ և ոճը: Եթէ աշակերտն անհաշտ կը չփորձի, համարաւոր թէ բառերը հասկացնել և թէ ոճը, ուրեմն այդ խօսքը պէտք էր թարգմանել ոչ միայն զարհուրելի, այլ և ահա՛ ուղիղ զարհուրելի: Նոյնպէս վարձար կանաչ և ոճը: Եթէ վարձը նշանակել և թէ վարձը ձգել, ուղիղ եմ ասել, գրաբանը աշակերտին բոլորովին հասկանալի անելու համար անհրաժեշտ է, որ թէ բառացի թարգմանութիւնը լինի և թէ իմաստ: Բայց գիր. Հեղինակը, երբ, կամենալով մէկ թարգմանութեամբ կրկին նպատակի հաս-

նել, ոչ մին է արել կատարելապէս և ոչ միւսը: Նորա թարգմանութիւնը խառնուրդ է բառական և իմաստի թարգմանութիւնների, որ աշակերտի ծաշակը և գաղափարը խառնալով է: Որինակ, երբեմն բառական թարգմանութեան հաւատարմ մնալով թոյլ է տալիս իրեն այսպիսի աշխարհաբան գործածելու. կարող է բառի ծառը չար պտուղ բերել, և ոչ չար ծառը կարող է բարի պտուղ բերել (փոխանակ. բարի ծառը է կարող չար պտուղ բերել, ոչ ոյն պէս և չար ծառը կարող է բարի պտուղ բերել—(երես 11). և ոչ այստի կարող է մէկը մեկ անցնել (ոչ ոյն պէս և մարդ կարող է չար ծառից մեկ մօտ գալ, կամ անցնել, 45 երես. Երբ որ տուն մտաւ Յիսուս Անարսէն առաջ անցաւ և ասաց, ինչպէս կ'երևի քեզ, Սիմոն. (Յիսուս երբ որ տուն մտաւ Պետրոսից յառաջ լսօսք բացեց և հարցոյց նրան. ինչպէս և սկսեց քննարկել Սիմոն—56). Որ մաքսապետ էր, ինքն ևս հարուստ մարդ (որ մաքսապետ և հարուստ մարդ էր. 83): Այս տունն այսօր փրկութեան հասաւ, վասն զի սա եմ (սի, տունը) Արքանաժողովի է (84):—Եւ ընդհակառակն, յաճախ այնպիսի թարգմանութիւններ է անում, որ աշակերտն անհաշտ կը չփորձի, համարաւորով այն գրաբանի հետ. օրինակ, զի արձակ և սց և զի արտուն հօր իմոյ—թող որ երթայ դա իմ հօր տունը: Ունին զՍովսէս և զմարգարէս, ոչ ոյն լուրից են—Սովսէս և մարգարէս էն երբ նոցա մօտ են, թող ոչ ոյն լսօսք երբ մօտիկ անեն (45—46): Բայց իրօք երբ մօտիկ անեն և բարձակցացն հրամայեց տալ նմա—բայց արած երդումներուն համար, նստողն երէն (?) և սմա-

չ եւ ու ի հրամայեց որ տրուի (61). Իբրեւ ոչ ուն էր հատուցանել (ծառայող), հրամայեց զնա վաճառել տէրն նոյն—տեսնել ինչ որ վաճառու կարող է, տէրը հրամայեց որ ծախեն իրեն (հւ, տէրին). Արձակ եաց զնա—թող ունաւ որ եւնէ երթայ. Եւ նա ոչ կամէր—իսկ նա մօտիկ չարաւ (66—67): Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք յետինք—ասացս կերպով յետինքն երկան որ առաջին պիտի լինին, առաջինքն երկան կան, որ յետ պիտի մնան, (79):
Սրանից զատ աշխարհաբան տաճկահայոց բարբառով է, և այն էլ մի հայացած և գործածութիւնից դուրս ելած ոճերով ու բառերով. օրինակ, համբարցնել (անհամար), լուսաւոր լինի (թող լուսաւորէ), նաւոր յառաջ կը գնային (նաւոր էին), մօտ գնացին (մօտեցան), կասեին իրարու, (միմեանց ասում էին), միտքդ բեր (յիշէ), բայց յայտարարեմ (բայց ստորանից, ստորանից զատ), մօտիկ անեմ, մօտիկ տալ (լսել), առաջանցան (մօտեցան), (14, 14, 33, 33, 34, 45, 46, 50, երեսներ): Եթէ ենթադրենք իսկ, թէ աշխարհաբանն այս թերութիւններից ազատ լինէր, դարձեալ ինչ հարկ կար զխառնապէս ուսանայոց համար պատրաստված դասագրքի լեզուն տաճկահայոց բարբառն ընդունել. եթէ այս առաջին տպագրութեան ժամանակ ներքին լինէր, երբ ուսանայոց աշխարհաբան մասին դեռ ևս չէին լինում էին, բայց այժմ, երբ այդ լեզուն են գրվում մատենադարանները, լրագրութիւնը և դասագրքերը, երբ այդ լեզուն մինչև անգամ քերականութիւնը կայ, երբ արդի լեզուագիտութիւնն ընդունում է հայերէն երկու աշխարհաբան բարբառ—արևելան

և արևմտան—ինչ նշանակութիւն, օգուտ և խորհուրդ ունի այդպէս անյողող մնալ իր սկզբնական լեզուին: Դա միայն արգելք է լինում դասագրքի ընդհանրապէս, աշակերտներին և վարժապետներին դժուարութիւն է պատճառում, և ուրիշ ոչինչ: (Սրանով չեմ ուզում ասել թէ տաճկահայոց աշխարհաբան պէտք է անձնաթիւ և հեռու պահել աշակերտներից. ոչ, այն կարեւոր է, մասնաւոր այժմ. բայց աշակերտը նախ պիտի սովորի իր բարբառով թարգմանել, և յետոյ, եթէ ժամանակ կ'ընէ, ծանօթանայ և տաճկահայոց բարբառին:
Աշխարհաբան թարգմանութիւնը, մեր կարծիքով, պէտք է երեք հատ լինի. առաջինը բառաւոր թարգմանութիւն, նոյն իսկ բնագրի բառերի ներքեւ գրված, որով աշակերտը իւրաքանչիւր բառի գործութիւնը և նշանակութիւնը կըմտնէ, երկրորդը ուսանայոց կենդանի աշխարհաբան, իմաստի (ազատ) թարգմանութիւն, որ աշակերտին պարտաւորիչ է սովորել. երրորդը նորա հանդէպ տաճկահայոց (կ. Պօլսի) մաքուր աշխարհաբան (ինչպէս Հ. Գարեթին Սրտանձտեանի դրածները կամ պ. Հայկալի նամակներն են «Մշակի» մէջ), որի ուսումը կամաւոր է. այսպէս:
Եւ եւեւ ծառայն այն եղիւ զմի ծառայակցած. (և եւեւ լուր ծառայն այն գտաւ մէկին ծառայընկերներից):
Իւրոց, որ պարտ էր նմա հարկը դանկան. և կայեալ զնա (որ պարտուներ նորան հարկը դանկան, և բռնելով նորան)
Խեղդէր և ասէր. Հատո ինձ զոր պարտաւոր: (Խեղդում էր և ասում էր. վճարի ինձ ինչ որ պարտը ես):
Ի. Երբ այն ծառան դուրս ելաւ իւր ընկեր

ըրսի ու Օէյթունի բաժանական հերոսի համար, նոցա երկուսին էլ միակերպ հարկաւոր է կրել վառ զգացմունք և արի սիրտ, զգայուն հոգի և վստահ ձեռք, վասնորոյ հարկաւոր է որ կրթու թեան այս սիստեման ամենուրեք միակերպ տիրապետէ և Օէյթուն, և Վան, և Երզրում:

Իսկ թէ մինչև ո՞ր աստիճան
ընդունակ են ազդել զինավարժա-
կան խաղերը Հայաստանի ըմբո-
նող մանուկների վրա, զորա ա-
պացոյց կարող է լինել նոյն Երզ-
րումը, որի երեսայք մտած են
արդէն ռուսաց պոլիցիական պրո-
տոկոլի մէջ մի փոանգաւոր կռուի,
որին ականատես փկայ ենք ե-
ղել մենք սորանից մի տարի ա-
ռաջ: Արժփելով երեք — չորս
ամսւայ ընթացքում կանոնաւոր
խաղերի մէջ քաղաքում գտնվող
ռուս սօլդատներին օգնութեամբ,
Երզրումի մանուկները այնչափ
փոխվել էին իրանց վաղքի մէջ, որ
կռիւ հրաւիրելով մի օր երեք ան-
գամ թուով շատ մուսուլման հա-
սակակիցներին, մեծ աղմուկ էին
յարուցել քաղաքի մէջ մի անխնայ
ջարդով, որով յետ էին ուղարկել
մուսուլմաններին դէպի նոցա շը-
փոթփած ծնողքը:

Այդ օրինակը մի՞թե աւելի
Լա չէ՞ հարկաւոր ապագայի հա-
մար...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԻՐԱԿ ԻՐՈՍԿՎ ԱՅԻՑ

30 *оцпишпиш*

Փողով, փողով, էլի փողով—ասում է Դավալ Դա-
դեն, փող, փող, էլի փող—կրկնում է ս. Էջմիած-
նի պտուղաձամաւորը, որ թաղապէջ թաղաք չլքելով,
հանդամակութիւն է անում Ս. Էջմիածնի ճնմա-
րանի մի քանի նոր շինութիւններին համար:—
«Ճշէ կողէ՛ք, խօսեցէ՛ք, որքան կամլք՝ դանգատե-
ցէ՛ք—միայն փող տուէ՛ք. մեզ փող է հարկաւոր,
իսկ եթէ չէ՛ք տայ, եթէ կը հակառակէ՛ք, եթէ
կը մերժէ՛ք մեզ—դուք աղգասէր չէ՛ք, դուք դուր-
կացած չէ՛ք, դուք անկիրթ ե՛ք, դուք ժշատ ե՛ք,
դուք...» 10

Մեր աստուածապաշտ Մոսկվան ևս պատիւ ու
նեցեալ ընդունել Ս. Էլմիթանի պատգամաւոր
հայր խորէն վ. Ստեփանէին, որ նոյնպէս եկաւ
էր հանգամանկութիւն անկուլ վերոյիշեալ նպատա
կով: Այս պատգամաւորութիւնը որպէս և պատ
գամաւորի ընտրողութիւնը, որոնց մասին ՎՄԿ
կը իր օժանդակին յայտնեց իր կարծիքը— թէ
պէտ է մի անակնկալ, մի օտարորդ եկեղեցի չէր հա
նաւորալուծական համար, բայց նա մի անգամ և
հաստատեց այն ընդհանուր ժողովրդի մէջ տա
րածված կարծիքը, թէ Ս. Էլմիթանը ոչինչ գոր
չունի ժողովրդի հետ, երբ սա որ և է բարոյա
կան պիտոյքներ ունի, կամ երբ «յանդգնում է
հաշիւ ու համարի մասին ձայն բարձրացնել բայ
մի և նոյն «ազգէտ» ժողովրդին Ս. Էլմիթանը
ճանաչում է բարեպաշտ, աղքատէր, կրթված, ս
ուրառածնուն և ես ինչ դիտում քնչ գեղեցիկ յառ
ուրեւնեցնելով գարդապաւած, երբ որ բանը ըն
նում է դրամական խնդիրներով:

ձնչդ այս ուղղութեամբ և այս հաճանքով
վարվեցաւ գերազաւոր պատգամաւորը, խօսելով
Մօսկվայի հայոց եկեղեցում մի երկար և ձեռ-
քարող, որ շատ ծանր տպագործիւն գործ-
ժողովրդի վրա: Այժմ հայր սուրբը կամի զա-
մացնել հասարակութեան իր բարձրաթիւն խօ-
քերով, միթէ նա կամի դրաւել ժողովրդի սիրտ
լոկ աննշան խօսքերով և կամ խոսել ծխովն
ղովրդականներէ փառաօրինութեանը. միթէ Հե-
լաստակցին—Ս. Էլմիամին աթոռից և կած պա-
գատաւորը միայն սպցմոսներով պէտք է բաւ-
կանութիւն տար ժողովրդի լարված ուշադրու-
թեանը և նորա սպասած կենսական խնդիրներին
Ահնք սպասում էինք, որ բարդ այն սահուն
ոլորում խօսքերի տեղ հայր սուրբը պէտք
պարզ և մանրամասնօրէն բացատրէր մեզ
իսկ Ս. Էլմիամին և նորա ճեմարանի վիճակ
սպասում էինք, որ նա ձնչօրէն սպացուցանէր, և
իրաւի ճեմարանը չտրի դրամական միջոցն
նշմանի կամ տնտեսաբան յինեակ. և այս ոչ

իդի խօսքերով, այլ հաշիւ ներկայացնելով և մէջ
բերելով այն գումարների թիւանշանները, որոնք
ժողովրդից կօպէկնելով են հաւաքած *):

Այդամ չստ իրաւացի կը լինէր մեր պահանջը,
եթէ խնդրէինք հայր սուրբին մեկնելու. թէ ինչ
իրաւունքով Ս. Էջմիածինը աղօպէս հեռու է պա-
հում իրան ժողովրդից, զայրանում և առ ոչինչ
համարում բողոքականն ձայնը, որ օրէցօր աւելի
և աւելի սաստկանալով, կարող է մի օր տեղի
տալ չստ անսխորթ հակառակութիւնների...

Այս և այլ մի քանի կարևոր ինդիկաների բացառություններն ինքն իրեն հետո հիմարտում ընկած եկեղեցու անդամներ—ամենայն իրաւունքով պահանջուած էինք հայր սուրբից, և ոչ թէ այն ստիպտականութիւնները, որոնք շատ լաւ հասկացաւ ժողովուրդը, որպէս և նոյն իսկ քարոզչականութեամբ ձանադեւում է շատ վաղուց: Ընդհանուր կարծիք է, թէ հազիւ Ս. Էջմիածնականագամաւորը կարող էր ունենալ Մօսկվայում (կարծեմ միւս քաղաքներումն էլ) որ և է յաջողութիւն իրան յամենած գործի մէջ, անգամ գործնելով իր բոլոր առեմաբանական և սովետական կան ճարպիկութիւնը, եթէ մի քանի բարեխաղ ժողովրդականներ թէ և թիկունք չը լինէին հայ սուրբին հանգանակութիւն անելու ժամանակ: Ուրեմն նոյն իսկ ժողովրդականներն էին ազդու ժողովրդի վրա և ոչ թէ մի քանի հատուկ տեղաբնակներից և սպառմաններից քարոզը (ինչպէս պարծնում էր հայր սուրբը), որ թէ ստեղծարարական և թէ թէլուզգիական էր տից շատ թոյլ և անախտ յանդադարով անախտաւ մի մի քանի անտեղծ մանրամասնութիւններով:*)

*) Լուսա ներ, որ Ս. Լճմաճմնի ճանապարհ
մինչև 300 հազար կողովի ապահովություն
ունի: Այդ գումարը հազմված է Աստուծոյ
նշք, Ամստերդամից, Հնդկաստանից և այլ զե
նազուտ տեղերից ժողոված փողերից: Նոյնպէս
ճաղջոցներէ և ծայրագոյնայն չարականներէ փողերի
որոնք այժմ առկուսաբեր թղթեր են: Բայց զա
մասնային պէ՛ն է, որ այդ ահաջոցն գումարը մին
այսօր հաշվուած է Ս. Լճմաճմնի վիճարկում:
Անտարախոյս ներկայ վճեհաբաժնի օրերով ա
զումարը բոլորովին ապահոված է. բայց ո՞վ կ
բող է յանձնատու լինել, որ ղեհաբաժնից յետ
և մինչ պէտք է նորան ապահովված համարեն
Սեր կարծիքով այդպիսի ահաջոցն գումարներն
այն է՝ ազգային գումարներն, պէտք է պա
արընտնական բանկում նոյն իսկ ճանապարհի անու
նով, որպէս զի ներ և ինք տեղիք չը տալ զան
օան հրապարակներն և զայնից հաղորդիւններն:

*) Լինթերցորդը չի վարանի իր մտքում Աստուծո
դիտել ինչ կարծիքներ տանելով մեր գրուածի մ
սին։ Միայն մենք կարող չենք հասկանալ. ինչպ
կարելի է քարոզ խօսել եկեղեցու մէջ և ամբող
ջողովորդից ընտրել մի անձ, որ այդտեղ ներկայ
և զգովաբանելով միայն և երկվոր հասցնել նոր
տարբերակի առաւանդներով իմանք...» Ի ս
Աստուծոյ, այսպէս էլ անտակտ վարմունք
կար, այսպէս անամոթի կերծաւորութիւն տես
կար։ Թէ որ քարոզիկը լինէր մի զիւղացի վ
գապիս, մենք իսկոյն անուն կը գտնէինք նոր
գրառապարտելու. բայց ինչ կասէք այս օտու
արեգային...»

Ինքն է հայր սուրբը ուղարկված էր Ս. Էջմիածնից միայն այնպիսի բարոյներ խօսելու, որոնցով արդեն իսկացել է մեր ականջները «շայակա՛ն աշխարհը»—մեր կարծիքով նորա զայն անգամ աւելորդ էր. մասնա՛նտղ էր նկատու ռե՛նեսանսով զաւարթից քաղաք ծանր և դժուար ճանապարհորդու լի՛նէր: Դեկ ի՛նչ որ վերաբերում է այն կոնդակին, որ գերապատու պատգամաւորը բերել էր իր հետ ի. Էջմիածնից, նրան կարելի էր փօստացով ևս ուղարկել բոլոր հայաբնակ քաղաքները և հանգստակութիւն անել նոյն քաղաքների եկեղեցականների օգնականութեամբ: Այսպէս վարվելով՝ կանակի էր բաւականին ղրաւական խնայողութիւն ևս անել և պատգամաւորի ճանապարհածախքը, որ եռուկ թէ մի քանի հարիւր ռուբլի կը լինէ—օգուտը կը մնար Ս. Էջմիածնի զանձարանում. իսկ հանգստակութեան գումարը գուցէ աւելի լինէր, քան հայր սուրբի ժողովածը:

Մենք համոզված ենք, որ այս տեսակ պատգամաւորութիւններ միշտ ծանր և անախորժ տղաւորութիւն կունենան ժողովրդի վրա ոչ թէ նրա համար, որ ինչպէս սովորաբար ասում են—փողի մասին խօսելը, կամ փող խնդրելը դժգոհութիւն է պատճառում ժողովրդին, ոչ. այլ նրա համար, որ մեր պատուելի պատգամաւորները չը դիտեն ինչպէս պէտք է քարոզին, ինչպէս պէտք է վարվել ժողովրդի հետ։— «Ազգը ով է, ուր է նա, ինչ է ժողովուրդը, ցոյց տուէ՛ք տեսնենք ձեռք ժողովուրդը. մի ջանի խաժամուժ ամբողջ, հա...» Այսպէս են խօսում մեր վեղարաւորները, երբ որ ժամանակ առ ժամանակ բարձրանում է ժողովրդի ձայնը նոցա անկանոն գործերի վրա. բայց տեսէ՛ք, ինչպէս մնդը են կաթիկցնում ժողովրդի խօրհուներն, ինչ իզու են թափում, երբ որ գործը վերջին մասին է։ Ահա թէ ինչ է մեր վեղարաւորների ներկայ թէօրիսն։

Չարամնալը և միանգամայն անհասկանալի մարդիկ են մեր ժողովրդը՝ Կիկերոնները, Նոբա ամենայն մի ներքին և աննրքին միջոց գործը կը զննեն համոզվու ժողովրդին փող տալ, նուիրատուութիւն անել Ս. Էլմիածին՝ նամար, այդ նոքա անում են ժողովրդին լուսաւորութեան համար, բայց մի է նոյն Կիկերոնները անձայն և աննրքու են դառնում Էլմիածին մէջ, որտեղ չառ մուտ խնդրէ ներ կան պարզելու և բացատրելու նոյնպէս ազգային լուսաւորութեան համար, Ո՛ւրիշ պէտք է պահանջէ ժողովուրդը որ և է հաշիւ ու համար ելի՞ն ոչ այն անձիքները, որոնք մտնում են ժողովուրդի մէջ և հանքանալուութիւն են անում: Այլ թէ՛ այդ գերապատուելիքը մնչկն այսօր չը կարողացան հասկացնել ուր հարկն է, թէ ժողովուրդը տրանշու՞մ է, թէ ժողովուրդը բողոքում է, թէ ժողովուրդը արդարացի պահանջներ ունի... Այժմ եկ ու մեղադրի՛ր Նոր-Նախիվանցիներին, որոնք այնպէս անախիվա սիրալիրէ են պատրաստել Էլմիածին պատգամաւորին—մի Փիտոօ, որ երբէք Ս. Էլմիածինը չէր սպասի իր ճշաւատարկ

ծառանքերից մէկին տեսաւ, որ իրեն հարիւր ղա-
հեկան պարտք ունէր. բռնեց նորան և խեղդում
էր ասելով. պարտքը վճարիր:

Գ. Այն ծառան դուրս որ ելաւ տեսաւ իւր ծառայ ընկերներէն մէկը, որ իրեն հարկը դահեկան պարտք էր. անոր բռնեց, և խեղդողով տնկաւ:

Միւս կրթութիւններից բառարանը և զրուցա-
տրութիւնը գոհացուցիչ կերպով կազմուած են
թէև կարելի էր բառարանն աւելի ճոխ և ձիւղ-
շինել, մասնաւանդ հարկաւոր էր ռուսահայոց հա-
մար բառերի ռուսական նշանակութիւնն աւելցնել
իսկ թարգմանութեան կրթութիւնը բառակազմ-
ացուցիչ է: Այս մասը, որ դասագիրքի մէջ այնպէս
անուշ-կերպով չիմլած է, մի և նոյն բնագիր-
հատուած հատուած բաժանելով, նոյնպէս և
թարգմանութիւնը (աւելի բառացի կերպով) կա-
րելի էր այնպէս գեղեցիկ պատրաստել, որ ամե-
նօգտակար և զուարճակլ դարձ լինէր: Պէտք էր
օրինակ, նոյն իսկ բնագիր բառերով նորաբան-
աստներն ու նախադասութիւններն կազմել աշ-
խարհաբառ թարգմանելի, նոյնպէս և աշխարհա-
բառ նախադասութիւններն կազմել զրաբառ թարգ-
մանելի: մի խօսք եթէ երկու և աւելի տեսակ կա-
րելի է թարգմանել՝ ամենն էլ դնել (եթէ կարելի
է նոյց զանազան երանգներովն—nuance հան-
դեճէ) և յետով, անցած դասերի և բառարանի
ընդ օգուտ քաղելով, նոր բնագիրներ կազմել
պահանջել որ աշակերտն ինքնին գրաւոր պատ-
րաստէ նորա թարգմանութիւնը և այլն: Սրանցիկ
մի քանիսն արդէն հելլինական յառաջաբանութեան
մէջ վերագրուած է վարժապետներին, բայց չէ կա-
րելի յոյս դնել միայն վարժապետներին վրա, սպ-
ախի կարեւոր կրթութիւնների ժամանակ, մասնա-
ւանդ աչքի առաջ ունենալով մեր այժմեան հայոց

Լեզուի վարժապետները մեծ ամառն ու թեան գիտությունն և դաստիարակությունը:

Մի գիտողութիւնն եւ, եսքերկէ, էր փորձ փորձ
հէնց այս առաջին մասից սկեալ գրաբառի թեր
կանութիւնն աւանդել *), բայց ոչ այն կերպով
ինչպէս արեւ է գիր. հեղինակը գտաագրել է
բարդ մաստւոյ, այսինքն գ ի ը, ւլ մանկ, Բա
ւան, աճ ուն, դերեր աճ ուն, բայ, և այլն
քերականութիւնները ոճով շարեւով, որոնք
կապակցութիւն ունեն դասի հետ, և որոնք կ
րելի էր գրելից դուրս առանձին ուսուցանել. —
այնպիսի քերականութիւն, որ նոյն իսկ բնագ
րդիւ է և պոփման ոճով աւանդվի: Օրինակ,
ուսջին բնագրից (ենթադրելով թէ բնագիրը կ
մկած է այն կերպով, ինչպէս վերոտւոյ ասկց
նուն առնել երկու ուղղական հոգովներ, (մի
հետ բայ, միւր ուղղական խնդիր), բացառ
ուղղական հոլովի կազմութիւնը, նշանակութիւ
ն և վարած պաշտօնը շագադրութեան մէջ. սովոր
նել ինչ է անուն բառն, ինչ է ուղղական խնդ
ն և այլն. երկրորդ բնագրուով (մի և նոյն բառ
սեռական հոլովով առնել) (բնագրից), բացառ
սեռական հոլովի նշանակութիւնը, կազմութիւ
ն սեռական անուն բայն և յատկացուցիչը. յետոյ
բանի բառեր ընդէլ բնագրից, այլ և այլ սեռ
կաննեցով. Հայկայ, ծառայ, ատաման, գազանի
ծառայ, ատամանց, գազանաց, հոլովմանքը
թուի կազմութեան օրէնքներն աւանդել, և ա
յսո կերպով աշակերտը առաջին մաստւոյ թեր
կանութեան ընդհանուր կանանները գ ի ա կ ղ
բար կը սովորի:

*) Ըստ որում այս դատազրկւոյքը ձեռքն առն աշակերտները պէտք է որ նախադատութիւնն կազմութեան արդէն ժանօթ լինեն:

Գալով դատազրքի արտաքին արժանատի
թեանց պէտք է ասել, որ սորա անթուկ
նորոգելով որ տպագրութիւնը շատ տեղէ է
տեղ աւելրված, տողերի հեռաւորութիւնը մի
անցից անհասարար է. Ա. քնազրի Գ. զասը
նայրված, և յետոյ առանձին թըղթեակի
տպագծ մէջը զրված է (երես 12—13), բա
րանների տառերի մէջ անհամար ուրիշ ձեւ
ուեր խառնված են, շէտերը և ուրբանները զե
միշտ սխալ են, բուն սխալները անհամար և սար
փելի են. հազարից մի քանին.— երկուսն է (և
կըրուսն է), զորաւոր, ընկեց, լինի (լի
ծածկիլի, փառաւորել (փառաւորեալ), (15 եր
աւոյի (աւալի—17). հատոյ (19), ամարի (ամա
յերկիքը (21) յերկնքէն, կալը եղև (կամ ե
պարտէ ենձ, պարտ (պարտ է ինձ, պարտը—
ցեղաբայր, եղբարներուս, (եղբայրներուս), որ
տև, սակաւապետ (սակաւապետ 26). տե
(տեսանես), թարմաւորթեան (թարմաւորթե
27, զոր-բութիւն (զոր-բութիւն), դուռն (դու
(28). թձ (թէ 31)...խոնար, հանդերձ (հանդ
եղեգն, Աստուած, քաշիլ (քաշիլ 34—35)...
տասիթը, եղաւ, ծածկեր (վատասիթը, եղեւ, ծ
կէթ—36—37). փափակիւր, վերքէն (38
— Վաղարուս (զաղարուս) և ընզուն (և իմ ըն
զնեղ, ի Հեռաստանէ (ի հեռաստանէ 42—
Ա. գոգն (ի գոգն). Աբրահամ (Աբրահամ),
միեն (կամիցին), այց (անդ 44—45). Աբրահ
շէշլըր, վէր կապ, ախարհը (46). ե ո թ ն ե
վ ե ց ե ո ո ւ ր ց (ե ո թ ն ե ա կ մ ե ա ա ս ն ե ո
50. ծառայք (ծառայք), հնողներուս (հննո
րուս)... Այալիս սխալներով լիքն են զբեր
մի երեսը, որոց եթէ բոլորը նշանակելու լին
զբեր չորրորդ մասի չափ տեղ կը բռնէ:

Այսքան բարեխղճութեամբ են վարվում մե

ճառատեսիլի տեղերը՝ իրանց գործի և ազգի հետ մի կապել են ընթերցողը, եթե այսօր սխալներն իր կրթության մեջ պատահե՛լին, բայց սա մի առում կարգավու. անցնելու լրագիր չէ, սա դա սա գիր է, սրա վրա պետք է սովորեն աշակերտը ուղի կարգավ և գրել։—Այդ պարուններն ամօթյալ ճարպիկությունամբ օգուտ են քաղել թե՛ գեր. Գաբրիել արքեպիսկոպոս Այգաթնոյի, իբրև մատենադարանալույն և թե՛ հայ ժողովրդեան տգիտությունից հոսալու վերջինի տգիտությունը իրանց գրական համար, և հրատարակելով այնպիսի մի տպագրություն, որի սխալներն ամօթ են բերում ամենքին որոնք փոքր ի չառե չեն կորուսել իրանց խղճմանը, և փոքր էլ վատասկելիս ունեն պատշաճ ուսման դասնազանի արդար և անարդար ծանց պարենքը։ Այսպիսի... տպագրությունը (բաղկացած երկու թերթից) ծախում են նոցա քառասուն կօպեկով, որ աշակերտները կամայ թե՛ ակամա գնում են, վասն զի լաւագոնք չը կայ. վարձար պետներն էլ բուռ ու մունձ կեցել են, վասն զի կամ վախենում են ծայր հանել (թե՛ բուն դասը դիր, և թե՛ տպագրությունն մատլի), կամ տոգն են. կամ—որպէս «Թորձ» ամսագիր (որի խմբագիրն Անտոնովսկան դրավաճառատնոցի գլխաւոր տէրն պարագլուխն է) պոռոտախօս հայոց լեզուի կրթողիկոսները,—վարձված գողով, այլոց աչքի չլուսմանս խառությունամբ քննելով գերան են չինուլակ իրանց սուտ դօկտոր վարձատիրով աչքի գրանի վրա ոչ միայն չեն անարձակում մատնացոյց լինել, այլ և նայել անգամ.—Փառք և պատգանք հպատակամտություններ...

